


Ինչպես է իրականացվում կոնտակտների (շփումների) բացահայտումը

Կոնտակտների բացահայտումը հասարակ, գաղտնի գործընթաց է, որը տասնամյակներով օգտագործվել է Հանրային Առողջապահության վարչությունների կողմից՝ վարակիչ հիվանդությունների տարածումը դանդաղեցնելու և համաճարակներից խուսափելու համար: Դուք կարող եք մասնակցել՝ պատասխանելով մի քանի հասարակ հարցերի, երբ Հանրային Առողջապահությունը զանգահարի:

Եթե Ձեր COVID-19 թեստի պատասխանը դրական է.

- Մնացեք տանը բժշկական օգնություն ստանալու համար և մեկուսացեք մյուսներից մինչև՝

- Առաջին ախտանշանների ի հայտ գալուց հետո առնվազն 10 օր, և
- Դուք առնվազն 24 ժամ ջերմություն չեք ունեցել, և
- Ձեր ախտանշանները բարելավվել են:



- Հանրային Առողջապահության Վարչությունը կկապվի ձեզ հետ հետագա քայլերի համար: Կարևոր է այդ զանգին պատասխանելը:



Հանրային Առողջապահությունը կհարցնի.

1. Այն վայրերի մասին, որտեղ դուք եղել եք:
2. Մարդկանց մասին, ում շրջապատում Դուք գտնվել եք՝ վարակիչ եղած ժամանակահատվածում:

- Մենք կկապվենք այն մարդկանց հետ, ում մասին Դուք մեզ տեղեկացնում եք, բայց նրանց չի ասվի Ձեր անունը կամ կոնտակտային տվյալները: Նրանցից նույնպես կպահանջվի տանը մնալ՝ օգնելու կանխելու ուրիշների հիվանդանալը:

Եթե դուք Հանրային Առողջապահության Վարչության կողմից զանգ ստանաք, ապա ձեր հեռախոսի վրա զանգը կերևա որպես LA Public Health կամ (833) 641-0305:

www.publichealth.lacounty.gov

08/25/20 (Armenian)

Եթե Դուք շփվել եք COVID-19-ով վարակված որևէ մեկի հետ.

- Մնացեք տանը 14 օր՝ COVID-19-ով վարակված անձի հետ Ձեր վերջին շփումից հետո:
- Հանրային Առողջապահության Վարչությունը կկապվի ձեզ հետ հետագա քայլերի համար: Կարևոր է այդ զանգին պատասխանելը:

Հանրային Առողջապահությունը կհարցնի.

1. Արդյոք ձեզ մոտ դրսևորվում են որևէ ախտանշաններ կամ արդյոք դուք թեստավորվել եք:
2. Նաև այն վայրերի մասին, որտեղ դուք եղել եք:



- Որպեսզի Ձեզ չշփոթեն որևէ այլ անձի հետ, խնդրում ենք տրամադրել նրանց Ձեր վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ:
- Տանը եղած 14 օրվա ընթացքում նրանք հնարավոր է զանգահարեն Ձեզ մեկ անգամից ավելի՝ ստուգելու, թե ինչպես եք Ձեզ զգում:
- Հիմնվելով Ձեր պատասխանների վրա, նրանք կտրամադրեն Ձեզ տեղեկություններ հաջորդ քայլերի վերաբերյալ:
- Նրանք նաև Ձեզ կտրամադրեն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես ձեռք բերել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ COVID-19-ի թեստավորումը կամ բժիշկ գտնելը, եթե դեռևս բժիշկ չունեք:

